ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12.11.2019թ.
ժամը 10^{30}

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ)
ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պլանավորման բաժնի պետ, գնդապետ Ա. Վարդանյան,
ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության ՆՏԱ բաժնի շահագործման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ղևոնդյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան

Գնումների համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Գ. Հակոբյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հավելված №3-ի (ԴԻՄՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման) և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ հավելված №3-ի (ԴԻՄՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման) և հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Հակոբյան)

1.1 «Սեդարա» ՍՊԸ-ն և «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ն ներկայացրել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը: «Սեդարա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հավելված 3.1-ը թերի է՝ տեխնիկական բնութագրում նշված է (ԱԵԵՐ 3*50+3*16), իսկ ապրանքի անվանման մեջ՝ (Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25), ինչպես նաև տեխնիկական բնութագրում բացակայում է «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: Գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հանապատասխանությունը հրավերի պահանջներին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ն և «Սեդարա» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Հաշվի առնելով «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 12.11.2019թ. երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկում, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

1.2 «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում գնահատող հանձնաժողովի 18.11.2019թ որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Սեդարա» ՍՊԸ-ն:

Քանի որ, «Սեդարա» ՍՊԸ-ն սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնում ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել, քանի որ արդեն հարցում կարարվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող, Ա. Վարդանյան

Գնահատող, Վ. Ղևոնդյան

Գնումների համակարգող՝ Գ. Հակոբյան